ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՐՈՒ ՆՊԱՍՏԸ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Վ. ՊԶՏԻԿՅԱՆ

Մխիթար Աբբա (1676–1749, Սեբաստիա–Վենետիկ) չեղավ այն փայլուն և կարող աստղերեն մին, որ հայոց երկնակամարին վրա փայլեցան ԺԷ դարուն վերջերը և ԺԸ-ի մեջ և ասուպի նման անցան, առանց գործնական հետք ձգելու կամ գպրոց մը ստեղծելու, ինչպիսին էր Ստեփանոս Ռոշքյան, Գեորդ գպիր Պալատեցի, Պաղտասար գպիր, Գրիգոր պատվելի Փեշտիմալճյան, Հոհան Միրզա Վանանգեցի են:

Մխիթար ԾՐԱԳԻՐ մը գրած էր իր կյանքին հիմնելով իր միաբանությունը: Ան կուզեր վերականգնել իր ազգին արժանապատվությունը, դարերու մոխիրներու մեջ թաղված անոր մշակույթը, լեզուն, պատմությունը, ծեսն ու հավատքը, գիրն ու գրականությունը:

Նախախնամությունը զինք նետած էր Ագրիկանի խաղաղ խորշի մը անկյունը, Վենետիկի լճակին մեջ, ուր կապրեր բարգավաճ հայ գաղութ մը և ուր ինք կառանձնանա իր աշակերտներով փոքր կղզյակի մը մեջ, որ ժամանակի ընթացքին պիտի գառնար լույսի փարոս մը հայության համար, հեռու իր պաշտելի հայրենիքի հողեն, ուր հարստահարիչ օտար պետություններ և ավազակախումբեր ժամանակի ընթացքին մոխիրի պիտի վերածեին գյուղերն ու քաղաքները, եկեղեցիներն ու վանքերը և հուսկ ամբողջ ցեղը սպանգի պիտի առաջնորդեին Միջադետքի անապատներուն մեջ:

Այդ ԾՐԱԳԻՐԸ, ընդհանուր գիծերու մեջ, կարելի է տասը վերնագիրներու բաժնել.

1. *Լեզվական վերանորոգում*
2. *Պատմագրություն–հնախոսություն*
3. *Կրոնական, ծիսական, հայրախոսական, աստվածաբանական*
4. *Հրատարակություն նախնյաց գործերու*
5. *Դասական գրականության շարժում*
6. *Աշխարհաբարի հայտնություն և գործադրություն*
7. *Ծնունդ հայ թատրոնի*
8. *Կրթական գործունեություն*
9. *Քարտեզագրություն, հայ գեղարվեստին նվիրված հրատարակություններ*
10. *Հիմնարկություն Մխիթարյան Ակադեմիայի*

1. ԼԵԶՎԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԺԸ դարու սկիզբը հայերենը այնքան աղճատված էր օտարաբանություններով, որ Մխիթարի նման մեր նախնյաց գործերու ընթերցող մը

անհանդուրժելի կը գտներ կացությունը և, ինչպես կը գրե իր կենսագիր Հ. Հ. Թորոսյան, «ան ունեցավ գաղափարը մեր հին, դասական լեզուն վերականգնելու»[1]:

Առաջին գործը կըլլա «Քերականություն գրաբար լեզուի հայկազյան սեռին, շարադրեցյալ աշխատասիրությամբ Տեառն Մխիթարա Վարդապետի»:

Առանց լեզվական վերանորոգության, գրական վերածնունդ չէր կրնար տեղի ունենալ: Այս պատգամը, որպես կտակ ընդունված իր աշակերտներեն, զիրենք մղեց ամեն ջանք թափելու Հիմնադրին ԾՐԱԳԻՐԸ իրականացնելու համար:

Այնուհետև, իրարու կը հաջորդեն Մխիթարյան հայրերու դործերը, անխառն և վճիտ հայերենով, սկսյալ Մատթեոս Եվդոկացիեն, Հ. Մկրտիչ Անանյանեն, Ասկերյանեն, հասնելով Հ. Միքայել Զամչյան, որ հեղինակն է ԵՐԿՐՈՐԴ քերականության մը, որ հաջորդական երեք տպագրություն ունեցած է, Հ. Գաբրիել Ավետիքյան՝ հեղինակ երրորդ քերականության, հանգելու համար հայոց լեզվի մեծագույն վարպետ Հ. Արսեն Բագրատունիի, որուն «ի պետս զարգացելոց»-ը՝ պտուղը 40 տարիներու ուսումնասիրության, մեր նախնյաց լեզվին, մինչև այսօր կը հանդիսանա հայերեն լեզվի մեծագույն գիտական շտեմարանը:

Լեզվական վերանորոգումին մեծապես նպաստեց Մխիթարի պատրաստած «Հայկազյան բառարանը», որ դժվարահաճ Լեո կը նկատե ԺԸ դարու մեծագույն հաղթանակը:

Մխիթարի հաջորդները, նորահայտ ձեռագիրներու լույսին տակ, լույս ընծայեցին «Նոր հայկազյան բառարանը», ծանոթ «Երից վարդապետաց» անունով ալ, ըլլալով երկը Հ. Գաբրիել Ավետիքյանի, Հ. Խաչատուր Սյուրմելյանի և Հ. Մկրտիչ Ավգերյանի: Սա արդեն մեծ պետության մը ակադեմիայի վայել գործ մըն էր, որուն համար Հրաչյա Աճառյան չի վարանիր պնդելու, թե «հայ լեզվի ամենեն կատարյալ բառարանն է»:

Լեզվական վերանորոգումի գործին մեջ կարևոր դեր կը խաղան նաև Վիեննայի Մխիթարյան մասնաճյուղի հայրերը: Մասնավոր հիշատակության արժանի են Հ. Հովսեփ Գաթրճյան (1820–1882) և Հ. Մատթիա Դարագաշյան (1818–1903): Լեզվական ուսումնասիրություններով հայտնի են նաև Հ. Յ. Տաշյան, Հ. Ք. Ալենյան և Գերպ. Արսեն Այտընյան (1824–1902), որուն «Քննական քերականությունը» (1866) ընդարձակ ուսումնասիրություն մըն է հայերեն լեզվի:

1887-ին Այտընյանի օրով կը հիմնվի «Հանդես ամսօրյա» պաշտոնաթերթը, նմանությամբ Վենետիկի «Բազմավեպին» (1843)՝ նվիրված հայ բանասիրության, ուր հայ և օտար հայագետներ մանրազնին ուսումնասիրություններով մեծապես կը նպաստեն հայոց լեզվի կատարելադործումին:

---

1 Հ. Հ ո վ հ ա ն ն ե ս Թ ո ր ո ս յ ա ն. Վարք Մխիթարա. Վենետիկ, 1933, էջ 439:

2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ–ՀՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատմական հողին վրա դարերու ընթացքին հայ անունը բնաջնջել ուզող և գործադրող, պատմությունը խեղաթյուրել փորձող, բոլոր բռնատիրություններու դեմ պատնեշի մը նման կանգնած են Մխիթարյան հայրերու անփոխարինելի վաստակը, անոնց կուտակած անհամար վիճակագրական, տեղագրական, աշխարհագրական և պատմագրական տվյալները, ամփոփված տասնյակ-տասնյակ հատորներու մեջ, որ համայն հայ ազգին պատմական հիշողությունը կրցած են վառ պահել երեք դար և նոր սերունդներուն փոխանցել կատակը պահանջատիրության:

Ասոնցմե առաջինը կը հանդիսանա, անտարակույս, Հ. Միքայել Չամչյան (1738–1823) իր եռահատոր «Հայոց պատմություն» կոթողային աշխատանքով հանդիսանալով նոր ժամանակներու Խորենացին, որ հայ ժողովուրդին ձեռքը կու տա իր ազգային լիակատար պատմությունը, որուն մինչև այսօր կը դիմեն պատմագետն ու բանասերը իրենց ուսումնասիրություններուն համար:

Հ. Ղուկաս Ինճիճյան (1758–1833) իր կարգին կը կատարե անփոխարինելի աշխատանք մը, ձեռնարկելով աղգագրական-վիճակագրական արշավանքներու պատմական Հայաստանի բոլոր տարածքին վրա, որուն արդյունք կըլլան՝ կոթողային աշխատասիրություններ՝ «Ստորագրություն հին Հայաստանյայց» և «Հնախոսություն աշխարհագրական Հայաստանյայց աշխարհի» և «Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի» (Գևրպ. Ագոնցի հրատարակած շարքին առաջին հատորը՝ ՀԱՅԱՍՏԱՆ), որոնցմով Ինճիճյան կու գա ամբողջացնելու Չամչյանի պատմության Աշխարհագրական և Տեղագրական բաժինները, ամենաթանկագին տեղեկություններ պարունակելով Հայաստանի քաղաքներուն ու գյուղերուն, վանքերուն և եկեղեցիներուն, բերդերուն և կրթական հաստատություններու մասին, որոնք այսօր ի սպառ ջնջված են:

Ինճիճյանի աշխատությունը կը շարունակեն բազմաթիվ այլ Մխիթարյան վաստակավոր հայրեր, որոնց մեջ հիշատակության արժանի են Հ. Ներսես Սարգիսյան (1800–1866) իր «Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս» պատկառելի հատորով, և մանավանդ Հ. Ղևոնդ Ալիշան (1820–1901), որ անկրկնելի, բացառիկ երևույթ մրն է հայ իրականության մեջ: Անոր արտադրած գրականությունը, առհասարակ հայության մասին, ընդգրկելով գրեթե բոլոր ճյուղերը հայագիտության, տպագրված և անտիպ հատորները, առանձին գրադարան մը կը կազմեն, համահավասար ակադեմիայի մը արտադրության:

Նվազ բեղուն, բայց նույնչափ օգտակար երկերու հեղինակ են Հ. Մանվել Բաջունի, Հ. Գաբրիել Այվազովսկի (մեծ նկարիչին եղբայրը), Ադոնց, Հ. Մինաս Բժշկյան, Հ. Հակոբոս Իսավերտենց, Հ. Միքայել Հովհաննիսյան են:

Այս մարդին մեջ նվազ բեղուն չեն եղած Վիեննայի հայրերն ալ, որոնց տպարանեն լույս տեսած Հ. Համազասպ Ոսկյանի ուսումնասիրությունները, նվիրված Հայաստանի բոլոր նահանգներու վանքերուն և եկեղեցիներուն, առանձին կրնան դրադարան մը լեցնել:

3. ԿՐՈՆԱԿԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԾԻՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԳՈՐԾԵՐ

Մխիթար համոզված էր, որ եթե հայ ժողովուրդը անդիտանա կամ հեռանա իր նախնիքներու հավաքեն, դատապարտված է կորսնցնելու իր էությունը կազմող տարրը, իր նկարագիրը և դառնալու համրանք մը միայն երկրագունդի վրա բնակող մարդկության մեջ: Երիտասարդության տեսած էր գավառներուն մեջ տգիտության հետևանքով կրոնափոխության տեսարաններ, ուր ամբողջական շրջաններ իսլամություն կընդունեին, տարբերություն չգնելով իրենց պապերուն հավատքին և իսլամության միջև, ազատելու համար անարդար տուրքերե և բռնություններե... Հարկ էր լուսավորել ժողովուրդը, կրոնաբարոյական գործերու հրատարակություններով, հրատարակել Ս. Գիրքը և բաժնել ժողովուրդին, մեկնաբանել Ավետարանը (Մատթեի), Հայտնության գիրքը և այլն, թարգմանել Մեծն Ալպերտի Աստվածաբանությունը և այլն:

Մխիթարի հաջորդները սկսան ընդլայնել աստվածաբանական և հայրախոսական գործերու հրատարակությունը: Զամչյանի «Վահան հավատոն» ջատագովությունն է Հայաստանյայց Եկեղեցվոյ ուղղափառության:

Հ. Գաբրիել Ավետիքյան և մանավանգ Հ. Մկրտիչ Ավգերյան կը մտնեն զուտ հայկական անդաստանեն ներս, առաջինը մեկնաբանելով Նարեկի աղոթքները և հայ եկեղեցվո Շարականները, իսկ Ավգերյան կը հանդիսանա եկեղեցական պատմության Զամչյանը, 1167 էջերե կազմված «Լիակատար վարք և վկայություն սրբոց» հրատարակելով, ուր ընդգրկված են Հայաստանյայց Եկեղեցվոյ տոնացույցին բոլոր սուրբերը:

Զանց կընեմ տասնյակ հատորներով լույս տեսած, Վենետիկի և Վիեննայի մեջ, կրոնաբարոյական, ծիսական, աստվածաբանական երկերը, գործ զանազան միաբաններու, որոնցմե յուրաքանչյուրը եկավ կաթիլ մը ձեթ ավելցնելու Մխիթարի վառած կանթեղին:

4. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՆԱԽՆՅԱՑ ԳՈՐԾԵՐՈՒ

Գրոց գյուտին անմիջապես հաջորդած ըլլալով բացառիկ աշխուժություն մը թարգմանածո և ինքնագիր գործերու, Վենետիկի և Վիեննայի զույգ վանքերուն մեջ խնամքով հավաքված և պահված հազարավոր ձեռագիր մատյանները կը պարունակեին հայ ժողովուրդի մշակութային գանձերը, զորս հարկ էր հրատարակել և ժողովուրդին սեփականություն դարձնել գործ մը, որ ծրագրված տեղի ունեցավ, և հերթաբար լույս տեսան մեր պատմիչները (Բյուզանդ, Ագաթանգեղոս, Եղիշե, Խորենացի, Փարպեցի ևն), հայրապետները (Սահակ, Մեսրոպ, Կորյուն, Եզնիկ, Մանդակունի, Օձնեցի, Դավիթ Անհաղթ, Մամբրե Վերծանող ևն...), հեթանոս և քրիստոնյա աշխարհի մեծ հեղինակները (Ոսկեբերան, Եփրեմ Ասորի, Փիլոն Եբրայեցի, Արիստոտել, Հյուսպոդիտես ևն), հրատարակություններ՝ որ կը սկսին ճոխացնել հայ ընտանիքներու գրադարանները և մեծ ծառայություն կը մատուցանեն բանասիրական և մատենագրական ուսումնասիրություններու:

5. ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Հիմնականորեն «Բագրատունին է, որ լայն չափով մտցուց հունլատին և եվրոպական մեծ ազգերու գրական դլուխդործոցները մեր մեջ, սորվեցուց գեղեցիկ արտահայտության ձևերը, խնամել ոճը, դնել արվեստ, չափակցություն գրվածքին մեջ»[2]:

Դասական շարժումի մյուս մեծ գեմքը կը հանդիսանա Գերպ. Էգուարդ Հյուրմյուղ (1799–1876), որուն «Բուրաստանքը» կը համարվի դասական բանաստեղծի ինքնագիր լուրջ արտադրություն:

Վենետիկի և Վիեննայի մեջ դասական շարժումին մեծապես նպաստեցին հույլ մը միաբաններ, որոնց ինքնագիր և թարդմանածո գործերը հղկեցին ժողովուրդին ճաշակը և պատրաստեցին աշխարհաբարի հայտնությունը, որուն ոտնաձայնը կը լսվեր արդեն զույգ վանքերուն մեջ:

6. ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԵՐԵՎՈՒՄԸ

Աշխարհաբարի գիտական առաջին ուսումնասիրությունը կը կատարե նույն ինքն Մխիթար Աբբա «Դուռն քերականության աշխարհաբար լեզվին հայոց» գործով լույս տեսած 1727-ին հունվար 29-ին և նույն տարին մարտ 7-ին հրապարակ կիջնե «Գիրք քրիստոնեականի վարդապետության շարագրեցյալ աշխարհաբարի լեզվավ», դարձյալ հեղինակություն Սեբաստացի մեծ վարդապետին:

Այնուհետև աշխարհաբարի մեծագույն ջատագովն ու կերտողը կը հանդիսանա Հ. Ղուկաս Ինճիճյան, որ 1799-են սկսյալ աշխարհաբար կը հրատարակե ամավերջյան հատոր մը «Տարեգրություն» տիտղոսով, ուր ամփոփված կը գտնենք անցնող տարվան քաղաքական, ընկերային բոլոր կարևոր դեպքերը:

«Տարեգրությունքը» կունենա չորս հատոր (1799–1802), և 1800-են սկսյալ նույն վանականը կը հրատարակե «Եղանակ Բյուզանդյան – Բազմավեպ» տարեթերթը, որ լույս կը տեսնե մինչև 1820 թվականը, միաժամանակ 1812–1816 տարիներուն, կը հրատարակվի, դարձյալ Ինճիճյանի հեղինակությամբ, «Դիտակ Բյուզանդյան» կիսամսյա քաղաքական թերթը:

Վիեննայի մեջ Գերպ. Արսեն Այտընյանի լույս ընծայած «Քննական քերականություն» ընդարձակ աշխատանքը աշխարհաբարի լավագույն հուշարձանը կարելի է նկատել, համազոր Բագրատունիի գրաբար լեզվի հուշարձան «Ի պետս զարգացելոց»-ին:

7. ԾՆՈՒՆԴ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ

Նախաքրիստոնեական և ետ լուսավորչյան Հայաստանի մեջ անժխտելի է հայ թատրոնի մը դոյությունը, ինչպես կը վկայեն Պլուտար-

---

2 Հ. Մ ե ս ր ո պ Ճ ա ն ա չ յ ա ն. Պատմություն արդի հայ գրականության, էջ 56:

քոս, Փ. Բուզանդ և ուրիշներ: Այս թատրոնը չէ ունեցած հարկ եղած զարգացումը:

Արդի ըմբռնումով թատերական կտորի մը հանդիպելու համար հարկ է սպասել մինչև 1753 ձեռագրի մը նախաբերդը խնամքով պահված Ս. Ղազարի դիվանին մեջ: Նույն դիվանը ունի գրավոր վկայություններ 1724 թվականով, թատերական ներկայացումներու Ս. Ղազարի մեջ: Այնուհետև բազմաթիվ նոր թատերգություններ գրված և ներկայացված են վանաբնակ վարդապետներեն և աշակերտներեն, կրոնաբարոյական և հատկապես հայրենասիրական բովանդակությամբ:

Թատրոնը Ս. Ղազարեն Պոլիս փոխադրողը կըլլա Հ. Մինաս Բժշկյան, ապա Հ. Պետրոս Մինասյան, որուն աշակերտները Մուրատ-Ռափայելյան վարժարանեն շրջանավարտ, կրնան նկատվիլ իսկական հիմնադիրները կազմակերպված թատերական գործունեության: Ասոնցմե են Մկրտիչ Պեշիկթաշլյան, Սրապիոն Հեքիմյան, Թովմաս Թերզյան, Նարպեյ, Էմմանուել, Եսայան, Սրապիոն Թղլյան, Մկրտիչ Աճեմյան ևն...

Նկատելի է, որ նույն շրջանի հայ բեմերու մեծագույն դերասաններն ալ սաներն են Փարիզի և Վենետիկի Մխիթարյան գույդ վարժարաններուն, սկսյալ աշխարհահռչակ Պետրոս Ադամյանեն, Արմեն Արմենյան, Ստեփան Էքշյան, Հովհաննես Սճեմյան, Տիդրան Փեշտիմալճյան, Հովսեփ Եազըճյան, Վահրամ Փափազյան և այլն:

8. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Մխիթարյանները իրենց դործը կատարած են ոչ միայն իրենց հրատարակած գրքերով, այլ ավելի ընդարձակ ու կենսունակ ձևի մը մեջ իրենց հասցուցած աշակերտներով[3]:

1746-ին Տրանսիլվանիո Պաշպալով հայկական դաղութին մեջ հիմը կը դրվի առաջին Մխիթարյան վարժարանին, երբ տակավին հիմնադիրը կենդանի էր:

Դպրոցներ ունենալ, այդ դարուն, անհրաժեշտություն մրն էր Մխիթարի ընդհանուր վերածնունդի ծրադիրը իրադործելու: Հրատարակություններով կարելի կը դառնար չափահաս սերունդը լուսավորել, իսկ դպրոցներով ապագա սերունդը պատրաստել:

Պաշպալովեն վերջ Մխիթարյան վարժարաններու ցանցը կը տարածվի քիչ մը ամեն կողմ, ուր պատմությունը և քաղաքական անցուդարձերը կը ցրվեն հայ ժողովուրդը: Անոնց երկարակեցությունը պայմանավորված կը մնայ նույն գաղութի կյանքեն և պայմաններեն:

Պաշպալովի առաջին կրթական հաստատութենեն մինչև Հալեպի վերջին (1936) վարժարան Մխիթարյան միաբանությունը ունեցած է 54 վարժարաններ, որոնցմե Փարիզի Սամուել Մուրատյանը և Վենետիկի Մուրատ-Ռափայելյանը (այսօր, դժբախտաբար երկուքն ալ փակած են իրենց դարավոր դռները) շատ մեծ ներդրում ունեցած են հայ վերածնունդի և ռոմանտիկ շարժումի անդաստաններեն ներս:

---

3 Ա. Զ ո պ ա ն յ ա ն. Դեմքեր. Փարիզ. էջ 51:

9. ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայերեն լեզվով առաջին քարտեզը պատրաստված է 1695-ին Ամստերդամի մեջ, Թոմաս Վանանդեցիի խնամքով, պղնձի վրա փորագրված, Ադրիանոս և Պետրոս Աքոնբեկ եղբայրներու կողմե:

Պղինձե փորագրություն պատրաստել տալը անհրաժեշտությունն մրն էր Մխիթարի նման հրատարակիչի մը համար, որուն գլխավոր առաքելությունը կկատարվեր տպարանի ճամբով, սակայն հաճախ գիրքի մը ապագրութենեն ավելի սուղ էին փորագրության մը պատվերները. ուստի Մխիթար երկու միաբաններու՝ Հ. Իգնատիոսի և Հ. Զաքարիայի կը թելադրե մասնագիտանալ փորագրության արվեստին, և այսպես նոր էջ մը կը բացվի հայ արվեստի պատմության մեջ՝ Ա. Ղազարի պղնձափորագրության արվեստը, որ իր լավագույն ներկայացուցիչը կունենա հանձին Հ. Եղիա Էնտաղյանի, որուն պատրաստած փորագրություններն ու Հայաստանի քարտեզները կրնային մրցիլ Վենետիկի մեծ վարպետներուն աշխատանքներուն հետ:

10. Ս. ՂԱԶԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ (ՃԵՄԱՐԱՆԸ)

Հիմը դրված է 8 սեպտ. 1700, երբ Պոլսո մեջ Մխիթար չուրջը խմբած իր դասափարականին հետևող տասնյակ մը երիտասարդներ կուիտեին նվիրվիլ «Հայ ժողովուրդի մշակութային ծառայության և Աստուծո Փառքին» (տե՛ս Հայկազյան Բառգիրքի Հառաջաբանը):

Այդ օրեն սկիզբ կառնե ակադեմիական աշխատանք մը, ծրագրված և գործադրված կաճառական լրջությամբ. ինչպես ցույց կու տան վերը նշված 9 կետերը:

Սակայն 17 օգոստոս 1810 Նապոլեոն Ա-ի վեհապետական հրովարտակով, Ս. Ղազարի մայրավանքը սլաշտոնապես կը դառնա ԱԿԱԴԵՄԻԱ ԱՐՄԵՆԱ ՍԱՆԳԹԻ ԼԱԾԶԱՐԻ, այսինքն՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ և այս տիտղոսով դերծ կը մնա բնաջնջումե, մինչ մեկը մյուսի ետևե կը փոկվեին Նապոլեոնի իշխանության ներքև գտնվող բոլոր վանական հաստատությունները, ակադեմիական աշխատանքներով չարդարացնելով իրենց գոյատևումը:

Իրավական մարմին զգեցած Մխիթարյան ակադեմիան չուտով կունենա նաև իր կանոնագիրքը, և ավելի ուշ նաև իր պաշտոնաթերթը՝ «Բազմավեպը», որ իր երկարակեցությամբ միջազգային մամուլին առաջնությունը կը գրավե:

Այս համառոտ տեղեկությունները կուզեմ փակել Շավարշ Նարգունիի սա քանդակիչ խոսքերով. «Իր ժամանակին մեջ մեծ, իր ժամանակեն ալ դուրս մեծ, այս հզոր միտքը, որ ՄԽԻԹԱՐ կը կոչվի, զիս կը շվոթեցնե իր գործին սահագնությամբ»[4]:

---

4 «Գեղանի», 1949, էջ 49: